Արձանագրություն N 3

Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի թեք տանիքների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/24» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի շարունակության

ք.Երևան

27.09.2017թ.

Ժամը՝ 10:40

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Մամուլյան/ԳԱՊ/

Հանձնաժողովի անդամներ՝ Տ. Պողոսյան /գնահատող/, Ա. Մխիթարյան /գնահատող/

Հ. Հարությունյան /բացող/, Լ. Հայրապետյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/24» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում առկա անհամապատասխանության շտկման մասին

(Ն. Մամուլյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ «Օհանյան Ինդասթրիզ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել է ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը գնահատվել է բավարար:

1.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ	Բավարար
«Օհանյան Ինդասթրիզ» ՍՊԸ	Բավարար
«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ	Բավարար
«Թերմոշինթել» ՍՊԸ	Անբավարար
«ԳԱԳՆԱԽՇԻՆ» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Ընթացակարգի 1-ին և հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցների մասին

(Ն. Մամուլյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/24» ծածկագրով գնման ընթացակարգի.

-1-ից 3-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից,

-2-րդ տեղ զբաղեցնող մասնակիցներ են ճանաչվել.

1-ին չափաբաժնի մասով «Օհանյան Ինդասթրիզ» ՍՊԸ-ն, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Ն. Մամուլյան)

Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ

27.09.2017թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ն. Մամուլյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության ստացման հաջորդ աշխատանքային օրը ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ..... Ն. Մամուլյան

Անդամներ՝ ..... Տ. Պողոսյան

..... Ա. Մխիթարյան

..... Հ. Հարությունյան

..... Լ. Հայրապետյան

Քարտուղար՝ ..... Ա. Համբարձումյան